

ԲՈՒՅՍԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Ա. Կ. ՌԻՍՏՅԱՆ

ԱՌՎՈՒՅՏԻ ԴԱՇՏ ՀԱՃԱԽՈՂ ԳԻՇԱՏԻՉ ՆՎ ՊԱՐԱՋԻՏ ՄԻՋԱՏՆԵՐԸ

Գյուղատնտեսական կուլտուրաների վնասատուների մասսայական դար-
գացումը կանխելու գործում էնտոմոֆագերը մեծ դեր են խաղում. նրանց
նշանակությունը առանձնապես մեծ է աուվուլտի վնասատուներին ոչնչացնե-
լու գործում:

1952—1955 թվականների ընթացքում կատարված ուսումնասիրությու-
նները ցույց տվին, որ Արարատյան հարթավայրում աուվուլտի դաշտը հաճա-
խում են զգալի թվով էնտոմոֆագեր:

Էնտոմոֆագ միջատները բաժանվում են երկու խմբի՝ ա) գիշատիչներ,
որոնք հարձակվում են ու խմում իրենց զոհին անմիջապես, բ) պարազիտ-
ներ, որոնք ձվադրում են պարազիտի տեր հանդիսացող միջատի մարմնի
մեջ, հետագայում ձվերից դուրս եկած պարազիտի թրթուրը, ապրելով նրա
հաշվին, ոչնչացնում է վնասատուին:

Գիշատիչ միջատներ

Արարատյան հարթավայրի պայմաններում աուվուլտի դաշտերում տա-
րածված են գիշատիչ միջատների հետևյալ տեսակները. Orius (Triphleps)
nigra Wolff., Camptobrochis punctulatus Fall., Seymnus vubromaculag tus
Goeze., S. frontalis F., S. sc., Adonia variegata Goeze., Coccinella
7-punctata L., Thea 22-punctata L., Propylaea 14-punctata L.,

Պարազիտ միջատներ

Պարազիտ միջատներն ըստ սնվելու եղանակի բաժանվում են երկու
խմբի՝ մոնոֆագ և պոլիֆագ. ըստ պարազիտելու եղանակի լինում են՝ ձվի,
թրթուրի, հարսնյակի և հասուն միջատի պարազիտներ:

1952—1955 թթ. կատարված հետազոտությունների ընթացքում աուվուլ-
տի դաշտում հայտնաբերված են հետևյալ պարազիտ միջատները. BRAC Apan-
teles obscurus Neea⁺, A. firmus Tall⁺, A. A. corvinus Reinh⁺, A. ru-
ficrus Hal⁺, A. vestalis Hal⁺, A. congestus Nees⁺, A. spurius Wesm⁺,
A. sp., Microplitis spinolae Naes⁺, M. scrophulariae Szepl., M. pseudo-
mediana Fahr⁺, Bracon bibartitus Wesm⁺, B. trucidator Marsh., B.
variegatod Nees⁺, B. erythrostictus Marsh⁺, Rhogas ductor Thunb.,
Rh. bicolor Spin⁺, Rh. incertus Kok., Rh. testaceus Spin., Chelonus
oculator Pz⁺, Ch. annulipes Wesm⁺, Triaspis caudatus Nees⁺, Meso-
chorus sp., M. sp., Orgilus obscurus Nees⁺, Dinocampus (Perilitus) termina-
tus Nees⁺, D. secalis Hal⁺, Amicrplus collaris Spin⁺, APHID. Aphididius

Sp., ICH. Cryptus viduatoius Habom., Pimpla spuria Grav., Enicospilus ramidulus L⁺., Noctotrachys foliator F⁺., Campoplex sp., Sagaritis latrator Grav⁺ Canidia (cureulion's) exigua Grav., Angita melania Thoms., Anilasta notata Grav⁺., A. prinzi Meyer⁺., Paniscus fusciscarpus Kok⁺., Exochus prosopius Grav⁺., Bassus laetatorius F⁺., Homocidus bizonarius Grav⁺., CHAL. Liodontomerus perplexus Gah⁺., Catolaccus ater Ratz⁺., Necremnus leucarthrops Thoms⁺., Tetrastichus incertus Ratz⁺., Cenicerus bruchophagii Gah⁺., Habrostuttf sp.

Սորերե կանգ կանենք այն պարագիտ միջատների վրա, որոնց տեր հանդիսացող ֆուսսատու միջատները մեր կողմից հայտնաբերվել են:

Առվույտի տերեւային երկարակնճիթը (Phytonomus variabilis Hbs.). Արարատյան հարթավայրում պարագիտվում է 5 տեսակի պարագիտներով՝ Canidia exigua Grav., Dinocampus terminatus Nees., D. secalis Hal., Necremnus leucarthrops Thoms., Tetrastichus incertus Ratz., բացի կանիդիայից մյուս պարագիտները Հայկական ՍՍՌ-ի պայմաններում նշվում են առաջին անգամ մեր կողմից:

Առվույտի սերմնակերը (Bruchophagus gibbus Boh.) պարագիտվում է Liodontomerua perplexus Gax., Geniocerus bruchophagii Cah. միջատներով:

Օկնոգինայի (Ocnogyna loewii var armena Chr.) թրթուրները պարագիտվում են 3 տեսակի պարագիտներով՝ Apantaeles ruficrus Hal., Rhogas incertus Kok., Catolaccus ater Ratz., որոնք որպես օկնոգինայի պարագիտներ նշվում են առաջին անգամ:

Apanteles ruficrus Hal. ն. Ա. Տեկենգալի տվյալներով [4] պարագիտում է Leucania impura Hb., L. littoralis Curt., L. pallens L., Agrotis praecox L., Chloridae obsoleta F., Loxostege sticticalis L., Plusia gamma L., Plutella maculipennis Curt. և այլ տեսակի միջատների:

Պարագիտան իր զարգացումը ավարտում է օկնոգինայի 4-րդ հասակի թրթուրների մեջ. մեկ թրթուրից դուրս են գալիս 20—30 պարագիտի թրթուրներ, որոնք անմիջապես առաջացնում են օվարածե գեղնագույն բոժոժներ, որոնցից 10—12 օր հետո սկսվում է հասունների թռիչքը (30/5—30/6). օկնոգինայի թրթուրների պարագիտվածությունը հասնել է 3,5⁰/₁₀-ի:

Rhogas incertus Kok. օկնոգինայի պարագիտակիր թրթուրները նորմալ ձևով հասնում են 4-րդ հասակի, որից հետո նրանք կուչ են գալիս և ամրանում սուբստրատին, մաշկը արտաքուստ չորանում է: Այսպիսի լուրաքանչյուր թրթուրից 5—6 օր հետո դուրս է գալիս մեկ պարագիտ: Նրա թռիչքն սկսվում է հունիսին և տևում մինչև հուլիսի առաջին կեսը: Օկնոգինայի թրթուրների պարագիտվածությունը եղել է 0,35⁰/₁₀:

Catolaccus ater Ratz. Մ. Ի. Նիկոլսկայան [2] նշել է որպես հեծյալների բոժոժների պարագիտ (գեր պարագիտ), սակայն մեր կատարած մանրազնին ուսումնասիրությունները ցույց տվին, որ նա օկնոգինայի համար առաջնային պարագիտ է: Օկնոգինայի պարագիտված լուրաքանչյուր թրթուրից դուրս են գալիս պարագիտի 5—6 հոդագույն թրթուրներ, որոնք հյուսում են մոխրագույն էլիպսաձև բոժոժներ: Բոժոժի երկարությամբ անցնում են նույն գույնի շերտեր: Առվույտի դաշտում նրա հասունները հանդիպում են ապրիլի վերջերից սկսած մինչև հուլիսի վերջերը: Նրանց բոժոժավորումն սկսվում է մայիսի վերջից և տևում է մինչև հունիսի սկիզբը: Տալիս է 2—3 սերունդ:

Ձմեռում է բոժոժում՝ թրթուր վիճակում։ Օկնոցինայի թրթուրների պարագիտածությունը եղել է $9,6^0/0$ ։

Առվույտի երկրաչափի (*Eubolia arenacearia* Hb.) թրթուրները պարագիտում են 6 տեսակի պարագիտներով՝ *Apanteles spurius* Wesm., *Rhogas testaceus* Spin., *Chelonus oculator* Pz., *Campoplex* sp., *Sagaritis latrator* Grav., *Anilasta prinzi* Meyer.

Apanteles spurius Wesm., ն. Ա. Տելենգայի տվյալներով [4] համաձայն, պարագիտում է *Aporia crataegi* L., *Lycaena hylas* Esp., *L. corydon* Poda., *Agrotis segetum* Schiff., *A. brunnea* Schiff., *A. praecox* L., *A. fugax*, Tt., *Pieris brassicae* L., *P. rapae* L. և այլ տեսակի միջատների։ Որպես առվույտի երկրաչափի պարագիտ նշվում է առաջին անգամ։ Հասուններն ստացվել են հունիսի 24-ին։ Առվույտի դաշտում հանդիպել է ամբողջ վեգետացիայի ընթացքում։

Rhogas testaceus Spin. ն. Ա. Տելենգայի տվյալներով [3] պարագիտում է՝ *Dicranura vinufa* L., *Cerura bifida* Hb., *Porthesia similis* L., *Cilix glaucatonia* Scop., *Phytometra gamma* L., *Tephroclystia sobrinata* Hb., *Caecocia rosana* L., *Depressaria applanata* F.

Այդ պարագիտը առվույտի երկրաչափի թրթուրներից ստացվել է մայիսի 28-ին։ Վ. Վ. Յախոնտովի տվյալներով [5] Միջին Ասիայում պարագիտում է նույնպես առվույտի երկրաչափի թրթուրներին։

Chelonus oculator Pz. ն. Ա. Տելենգայի տվյալներով [3] պարագիտում է՝ *Loxostega sticticalis* L.։ Որպես երկրաչափի պարագիտ նշվում է առաջին անգամ։ Նրա հասուններն ստացվել են հունիսին։

Campoplex sp. ստացվել է երկրաչափի թրթուրներից, հունիսին։

Sagaritis latrator Grav. ն. Ֆ. Մեյերի տվյալներով [1] պարագիտում է՝ *Plutella maculipennis* Cutt.։ Հասունները երկրաչափի թրթուրներից ստացվել են հունիսին։ Որպես երկրաչափի թրթուրի պարագիտ նշվում է առաջին անգամ։

Anilasta prinzi Meyer. ն. Ֆ. Մեյերի տվյալներով [1] պարագիտում է *Heliothis armigera* Hb.։ Որպես երկրաչափի պարագիտ արվում է առաջին անգամ։ Հասուններն ստացվել են հունիսի 6-ին։

Նշված բոլոր պարագիտները երկրաչափի մասսալական դարգացումը կանխելու գործում մեծ դեր են խաղում։

Կապտաթիթևի (*Lycaena icarus* Rott., *L. bellargus* Rott.) թրթուրներից ստացվել են 3 տեսակի պարագիտ, որոնք մեծ դեր են խաղում կապտաթիթևի բազմացումը կանխելու գործում։ Այդ պարագիտներն են՝ *Apanteles ruficrus* Hal., *Rhogas bicolor* Spin., *Anilasta notata* Grev.

Apanteles ruficrus Hal. պարագիտում է նաև կապտաթիթևի թրթուրներին։ Հասուններն ստացվել են մայիսին և հանդիպել է առվույտի դաշտում ամբողջ վեգետացիայի ընթացքում։ Որպես կապտաթիթևի պարագիտ նշվում է առաջին անգամ։

Rhogas bicolor Spin. ն. Ա. Տելենգայի տվյալներով [3] պարագիտում է *Pterophorus monodactylus* Hübn., *Zygaena filipendulae* L., *Epinephele jurtina* L., *Lycaena eros* L.։ Հասուններն ստացվել են հունիսի վերջերին։

Anilasta notata Grav. ն. Ֆ. Մեյերի տվյալներով [1] պարագիտում է *Gnophos obscurata* Hb., *Euxoa segetum* Schiff.

Կապտաթիթեոի թրթուրներից հասուններն ստացվել են հունիսին: Որպես կապտաթիթեոի պարազիտ տրվում է առաջին անգամ:

Աշնանացանի բվիկի (*Agrotis segetum* Schiff.) թրթուրները Արարատյան հարթավայրի պայմաններում պարազիտվում են հետևյալ պարազիտներով՝ *Apanteles spurius* Hal. *Microplitis pseudomediana* Fabr., *Chelonus oculator* Panz., *Microplitis collaris* Spin.

Apanteles spurius Hal. հասունները աշնանացանի բվիկի թրթուրներից ստացվել են մայիսին:

Microplitis pseudomediana F. ն. Ա. Տելենգայի տվյալներով [4] պարազիտում է՝ *Cucullia verbasci* L., *Polia flavicincta* F., *Taeniocampa stabilis* Viem.: Որպես աշնանացանի բվիկի պարազիտ նշվում է առաջին անգամ:

Cholonus oculator Pz. Spin. Ստացվել է աշնանացանի բվիկի թրթուրներից հունիսի 6-ին: Որպես աշնանացանի բվիկի թրթուրի պարազիտ նշվում է առաջին անգամ:

Amicroplus collaris Spin. Սաչոկային հավաքներում պարազիտի առվույտի դաշտում հանդիպել է մայիսից սկսած մինչև վեգետացիոն շրջանի վերջը: Խ. Մ. Հարուժյունյանը նրան ստացել է աշնանացանի բվիկի թրթուրներից: Յուրաքանչյուր պարազիտակիր թրթուրից ստացվել է պարազիտի 560 թրթուր: Հասունների թռիչքն սկսվել է մայիսին: Նրա տեր միջատների մասին գրական տվյալները մեզ չի հաջողվել գտնել:

Գամմա բվիկի (*Phytometra pamma* L.) թրթուրները պարազիտվում են *Microplitis spinolae* Nees. ն. Ա. Տելենգայի տվյալների [4] համաձայն, այս միջատը պարազիտում է՝ *Miselia oxycanthae* L., *Plusia gamma* L., *Habrostola tripartita* Hbn., *Lyperina caespitis* F. *Acronycta alni* L., *Chloridea dipsacea* L.: Հասուններն ստացվել են հունիսի վերջերին:

1952—1955 թվականների ընթացքում կատարված ուսումնասիրություններից պարզվել է, որ Արարատյան հարթավայրի պայմաններում առվույտի դաշտ հաճախում են 58 տեսակի էնտոմոֆագ միջատներ, որոնցից 10-ը գիշատիչներ, 48-ը պարազիտներ:

Առաջին անգամ Հայկական ՍՍՏ էնտոմոֆագունայի կազմում նշվում են՝ առվույտի տերևային երկարակնճիթի 4, առվույտի սերմնակների 2, օկնոզինայի 3, առվույտի երկրաչափի 4, կապտաթիթեոի 2 և աշնանացան բվիկի 2 տեսակի պարազիտներ:

48 տեսակի պարազիտ միջատներից 35-ը Հայկական ՍՍՏ էնտոմոֆագունայի համար նշվում են առաջին անգամ: Հայաստանի էնտոմոֆագունայի համար առաջին անգամ հայտնաբերված պարազիտ միջատները ցուցակում բերված են + նիշերով:

ՀՍՍՏ Գյուղմրինիստրուկցիայի երկրագործության
ինստիտուտի բույսերի պաշտպանության բաժին

Ստացվել է 11 IV 1957

А. К. УСТЬЯН

ХИЩНИКИ И ПАРАЗИТЫ НАСЕКОМЫЕ,
ПОСЕЩАЮЩИЕ ЛЮЦЕРНУ

Р е з ю м е

В течение 1952—1956 гг. нами проводились исследования по выяснению энтомофауны хищных насекомых и паразитов, посещающих люцерну в условиях Араратской равнины. Изучение проводилось методом сачковых сборов, а также воспитанием собранных на люцерновых полях вредителей до получения взрослых фаз паразитов.

Изучением установлено 58 видов полезных насекомых, посещающих люцерну. Из них 10 видов хищников и 48 паразитов.

Из числа паразитов 20 видов отмечены нами как паразиты вредителей люцерны, в том числе—5 видов паразиты фитомуса, 2 вида семееда, 3 вида окногины, 6 видов люцерновой пяденицы.

Из общего числа 48 видов паразитов 35 для Армении отмечают впервые. Из 20 видов паразитов вредителей люцерны впервые для Армении отмечают 17.

Գ Ր Ա Շ ՈՒ Ն ՈՒ Ր Զ ՈՒ Ն

1. Мейср Н. Ф. Паразитические перепончатокрылые сем. Ichneumonidae СССР и сопредельных стран, вып. IV, 1935.
2. Никольская М. Н. Халыциды фауны СССР, 1952.
3. Теленга Н. А. Фауна СССР. Насекомые перепончатокрылые, сем. Braconidae, т. V, вып. 3, 1941.
4. Теленга Н. А. Фауна СССР, Перепончатокрылые, сем. Braconidae, т. V, вып. IV, 1955.
5. Яхонтов В. В. Список вредителей хозяйственных растений Бухарского округа и зарегистрированных на них хищников и паразитов. Труды Ширабудиной опытной с.-х. станции, Отдел защиты растений, вып. 2, 1929.